ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՐԱԳԱՐԱՆԱՅԻՆ ԴՈՐՇԻ ՎԵՐԵԼՔԸ

Գ. Գ. ԱՂԱԵԱՆՅԱՆ
Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրադարանների բաժնի պետ, ՀՍՍՀ վաստակավոր գրադարանավար

Գրքի հրատարակումը Հայաստանում փաստորեն սկսվել է սովետական կարգերի հաստատմամբ, երբ նորաստեղծ կառավարության ստաջին իսկ դեկրետներից մեկով 1921 թ. կազմակերպվում է պետական հրատարակչություն (Հայպետհրատ): Եվ սակայն, ընդամենը հիսուն տարում, հրատարակվել են հասարակական-քաղաքական, գիտա-արտադրական, ուսումնական, գյուղատնտեսական, տեխնիկական, գեղարվեստական և այլ բնագավառների վերաբերյալ շուրջ 32 հազար անուն գրքեր՝ 216 միլիոն օրինակ ընդհանուր տպաքանակով: Դա նշանակում է, որ սովետական իշխանության տարիներին Հայաստանում հրատարակվել է ավելի շատ հայերեն գիրք, քան նախահեղափոխական 150 տարիների ընթացքում՝ աշխարհի տարբեր երկրներում ընդհանրապես: Այժմ չկա ժողովրդական տնտեսության և մշակույթի որևէ բնագավառ, որին նվիրված մասնագիտական գրականություն չլինի հրատարակված հայերեն: Միայն այս տարվա իր ամիսներին (մինչև հոկտեմբերի 1-ը) լույս է տեսել 1100 անուն գիրք, 1913 թ. հրատարակված 55 և 1918—1920 թթ. 46 անուն հայերեն գրքերի դիմաց:

Գիրքը և պարբերական մամուլը հաստատուն մուտք են գործել մեր ժողովրդի կենցաղի մեջ, դարձել են յուրաքանչյուր կոլտնտեսականի, բանվորի, սովորողի ու մտավորականի հոգևոր զարգացման և բարձր կուլտուրայի հիմնական աղբյուրը: Տպագիր արտադրանքի քանակն ավելանալու հետ մեկտեղ տարեցտարի բարելավվել է նաև հրատարակությունների բովանդակությունը, բարձրացել տպագրության որակը: Հրատարակչական գործի այսպիսի զարգացման շնորհիվ աղգաբնակչության լայն խավերը հաղորդակից են դարձել գրքերին: Միաժամանակ մեծ հնարավորություն է ստեղծվել գրականությունից սիստեմատիկաբար օգտվելու համար:

Ազգաբնակչության շրջանում գրքերի և պարբերականների տարածումը եղել է ու շարունակում է մնալ կուսակցական և պետական համընդհանուր աշխատանքի անբաժան մասը: Ժողովրդի մեջ տպագիր արտադրանքի տարածումը հիմնականում տեղի ունի գրքի առևտրի կազմակերպմամբ, որն ապահովում է գրքերի ձեռք բերումը՝ անձնական օգտագործման համար և գրադարանների ստեղծմամբ՝ գրքերի հասարակական լայն օգտագործումն ապահովելու նպատակով:

Գրքային հարստություններից օգտվելու հասարակական եղանակը, որպես առավել նկուն և կազմակերպված ձև, ունեցել է և այժմ էլ ունի առաջատար դեր՝ մասսաների մեջ գրքերի տարածման համար: Կենսագործելով Վ. Ի. Լենինի հանրահայտ դրույթները գրադարանային գործի կազմակերպման մասին, կուսակցությունը հատուկ ուշադրություն դարձրեց ամբողջ երկրով մեկ գրա-

դարանային ցանցը սլանաշափ զարգացնելու և այն ռացիոնալ անդաբաշխելու խնդրին: Դրա շնորհիվ, ժողովրդի նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի աճին զուգընթաց, ինչպես ՍՍՀՄ մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում, անցած 50 տարիների ընթացքում, բնակչության գրադարանային սպասարկման գործը և նրա հետագա զարգացումը հասել է անհերևակայելի մակարդակի:

ՍՍՀՄ-ում ներկայումս գործում է 390 հազար գրադարան, այդ թվում 52 հազար գիտական, մասնագիտական, տեխնիկական, 188 հազար դպրոցական և 150 հազար մասսայական գրադարաններ, որտեղ կենտրոնացված են շուրջ 2,5 միլիարդ օրինակ տպագիր միավոր: Սա 3 անգամ ավելի է, քան նախահեղափոխական Ռուսաստանի գրադարանային հիմնարկների թիվը և 60 անգամ գերազանցում է նրանց գրքային ֆոնդերը:

Գրադարանային ցանցը աննախընթաց վերելք է ապրել նաև մեր հանրապետությունում: Մինչհեղափոխական Հայաստանում ընդամենը գործում էր 13 գրադարան՝ 120 հազար գրքային ֆոնդով, հին հայկական գյուղում ու քաղաքում առհասարակ գրադարանը բացառիկ երևույթ էր և, բնականաբար, դիտվում էր իբրև բարձր զարգացման ապացույց: Բնավ պատահական չէ, որ գրադարանային ցանցը Հայաստանում սկսում է զարգանալ միայն սովետական կարգեր հաստատվելուց հետո: Այժմ Հայաստանում կա 2860 գրադարան, այդ թվում 300 գիտական, մասնագիտական և տեխնիկական, 1300 դպրոցական և 1260 մասսայական գրադարաններ, որտեղ կենտրոնացված են 26 միլիոն 400 հազար կտոր գրքեր, հանդեսներ և բրոշյուրներ:

Ամենայն հպարտությամբ կարելի է արձանագրել, որ ներկայումս հանրապետությունում լուծվել է ազգաբնակչությանը գրադարանային գրքերով սպասարկելու հարցը: Այսօր չկա ոչ մի գյուղ, բանավան, բնակելի թաղամաս, ուսումնական հաստատություն, հիմնարկ-ձեռնարկություն և խոշոր արտադրամաս, որը չունենա իր գրադարանը:

Նորաստեղծ բնակավայրերում, ուսումնական հաստատություններում և առանձին ձեռնարկություններում նոր գրադարանների կազմակերպումը կշարունակվի դրանց ստեղծման զուգընթաց: Սակայն, արդի պայմաններում, մեծ նշանակություն ունի գոյություն ունեցող գրադարանների նյութատեխնիկական բազայի ամրապնդումը, նրանցում աշխատատար պրոցեսների ավտոմատացումն ու մեքենայացումը, գրքային ֆոնդերի պլանաչափ գիտական և պրոֆիլային կոմպլեկտավորումը, աշխատող կադրերի մասնագիտական որակավորման ու քաղաքական կրթության խնդիրների լուծումը:

Գրադարանային ցանցի և գրքային ֆոնդերի աննախընթաց աճը հնարավորություն է ընձեռում մի քանի անգամ ավելացնելու ազգաբնակչության գրքերով ապահովվածությունը: 1913 թ. Հայաստանում յուրաքանչյուր 100 բնակչին միջին հաշվով ընկնում էր 2 գիրք, 1940 թվականին՝ 500, իսկ ներկայումս՝ 1200 գիրք, այն դեպքում, երբ 1969 թ. Անգլիայում նույնքան բնակչին ընկնում էր 47, ԱՄՆ-ում՝ 61, Ճապոնիայում՝ 54, Թուրքիայում՝ 19 գիրք:

Գրադարանների ցանցի աճը հանգեցրեց նրան, որ տասնյակ հազարավոր ընթերցողներ՝ գիտնական ու բանվոր, ուսանող ու տնային տնտեսուհի, ծառայող ու երեխա, թոշակառու և մասնագետ հնարավորություն ստացան իրենց կուլտուրական և մասնագիտական մակարդակը բարձրացնելու համար օգտվել գրադարաններից: Եթե 1940 թ. 908 տարբեր գրադարաններից օգտվել են 121

հազար մարդ՝ ընթերցելով 1.5 միլիոն կտոր գիրք, իսկ 1950 թ. գոյություն ունեցած 1980 գրադարաններից՝ 395 հազար ընթերցողներ՝ օգտվելով 7 միլիոն 900 հազար կտոր գրքերից, այդ 1960 թ. հանրապետության 2609 գրադարաններից գրքեր են ստացել 435 հազար մարդ՝ ընթերցելով մոտ 10.5 միլիոն գիրք: Վերջին տասնամյակում ևս զգալի չափով աճել է թե՛ գրադարանների ու նրանցից օգտվող ընթերցողների և թե՛ օգտագործված գրքերի թիվը: Մինչև 1970 թ. հունվարի 1-ը Հայկական ՍՍՀ-ում կար 2860 գրադարան, որից օգտվել են 860 հազար մարդ: Ընթերցողների օգտագործած հրատարակությունների թիվը հասել է 16 միլիոն կտոր գրքի:

Սովետական տարիներին հանրապետության հրատարակչական և գրադարանային գործի ծավալման վկայությունն են ստորև տրվող տվյալները.

	1913 թ.	1928 թ.	1940 թ.	1950 թ.	1960 թ.	1969 թ.
Ընդամենը լույս տեսած գրքեր	55	372	413	830	1055	1100
տպարանակը (հազ. օրինակ)	80	1,080	2,819	4,878	6,417	8,000
այդ թվում գիտական գրականություն.	—	24	97	106	182	214
Ուսումնական գրականություն *(Դասագրքեր, ձեռնարկներ, ուսումնական օժանդակ նյութեր)*	—	43	171	219	208	317
Արտադրական գրականություն	—	52	136	168	173	204
Ամսագրեր և այլ պարբերականներ	2	22	24	34	65	89
Գրադարանների թիվը	13	138	908	1980	2609	2860
Գրքային ֆոնդը *(հազ. օրինակ)*	120	608	8,711	12,239	19,074	26,400
Աշխատողների թիվը	—	210	1250	3,400	5,200	6,940

Մեր գրադարանների գործունեության նպատակն է բավարարել ազգաբնակչության կուլտուրական պահանջները, ստեղծագործել մարդկության ստեղծած գրավոր առաջադիմական մշակույթը, նպաստել կոմունիստական շինարարության գործին, մարդուն զինել անհրաժեշտ գիտելիքներով: Այսօր մենք հպարտանում ենք ոչ միայն հանրապետության գրադարանների քանակով, այլ նաև նրանց գործունեության որակական ցուցանիշներով: 1921 թ. հիմնադրված Ա. Մյասնիկյանի անվան հանրապետական առաջին կարգի գիտական գրադարանում այժմ կենտրոնացված է շուրջ 6,5 միլիոն օրինակ տպագիր միավոր: Այն դարձել է գրադարանագիտության, մատենագիտության, հանրապետության գրադարաններին մեթոդական օգնություն կազմակերպող կենտրոն, հայ տպագիր գրքի համաշխարհային շտեմարան: Գրադարանը գործնականորեն կապված է ոչ միայն եղբայրական հանրապետությունների, Մոսկվայի ու Լենինգրադի խոշոր գիտական գրադարանների հետ, այլև ակտիվ գրքափոխանակություն է կատարում աշխարհի 35 երկրների ավելի քան 100 կազմակերպությունների հետ:

Հանրային գրադարանի գրքային հարուստ ու բազմաբովանդակ հավաքածուները նպաստում են հանրապետության էկոնոմիկայի, գիտության ու մշակույթի զարգացմանը: Գրադարանից տարեկան օգտվում են 28 հազար մշտական ընթերցողներ, որոնք օգտագործում են շուրջ 2 միլիոն կտոր տպագիր հրա-

տարակություն: Նրա ֆոնդերը միջին հաշվով համալրվում են 290 հազար տպագիր միավորով: Գրադարանը տարեկան ընդհանուր առմամբ սպասարկում է մոտ 350 հազար գիտաշխատողների, ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառի մասնագետների և ուսանողների: Այստեղ ընթերցողների տրամադրության տակ է դրված հայ առաջին տպագիր գրքից («Պարզատումար», Վենետիկ, 1512 թ.), և առաջին հանդեսից («Ազդարար», Մադրաս, 1794 թ.), մինչև մեր օրերում հրատարակվող գրքերը, հանդեսները և թերթերը: Գրադարանի գրքային ֆոնդերը հարուստ են նաև ՍՍՀՄ և արտասահմանյան ժողովուրդների լեզուներով լույս տեսած գրականությամբ:

Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանն ընդհանրացնում և մասսայականացնում է հանրապետության մյուս գրադարանների աշխատանքի առաջավոր փորձը, գործնական ու մեթոդական օգնություն է ցույց տալիս մասսայական գրադարաններին: Գրադարանը հատկապես վերջին տասնամյակում հայ տպագիր գրքի պատմության, մատենագրության ու գրադարանագիտության ուղղությամբ գիտահետազոտական լայն գործունեություն է ծավալել:

Հանրապետության բնակչության նյութական բարկեցության, հանրակրթական և կուլտուր-տեխնիկական մակարդակի աճին զուգընթաց, սովետական տարիներին ստեղծվեց նաև մասսայական, գիտական, տեխնիկական և մասնագիտական գրադարանների լայն ցանց:

Մասսայական գրադարաններին (գյուղական, շրջանային, մանկական, քաղաքային, ֆաբրիկա-գործարանային) բնորոշ են ամրողջ բնակչության բազմակողմանի զարգացման, մարքս-լենինյան տեսության և հանրակրթական գիտելիքների տիրապետման համար անհրաժեշտ կարևոր գրականության ընտրությունը և այն ընթերցողներին ժամանակին հանձնարարելը: Մանկական գրադարանների առանձնացումը պայմանավորված է մատաղ սերնդի ուսուցման ու կոմունիստական աշխարհայացքի ձևավորման նպաստելու խնդիրներով: Այժմ հանրապետությունում գործում են 130 քաղաքային գրադարաններ՝ 3 միլիոն 500 հազար գրքային ֆոնդով, 68 մանկական՝ 1 միլիոն 400 հազար գրքային ֆոնդով, 500 գյուղական-ինֆեռուրյն՝ 3 միլիոն 200 հազար գրքային ֆոնդով, 425 գյուղական ակումբներին կից՝ 1 միլիոն 200 հազար գրքային ֆոնդով, 34 շրջանային՝ 871 հազար գրքային ֆոնդով, 102 արհմիութենական՝ 750 հազար գրքային ֆոնդով և 9 կոլտնտեսային՝ 18 հազար գրքային ֆոնդով:

Գիտական և մասնագիտական գրադարանների շարքում հատուկ տեղ ունեն գիտությունների ակադեմիայի գրադարանները: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ֆունդամենտալ (կենտրոնական) և նրա 21 գիտահետազոտական ինստիտուտների գրադարանների գրքային ֆոնդերը այսօր հասնում են շուրջ 2 միլիոն 400 հազար տպագիր միավորի: Այդ գրադարաններից յուրաքանչյուրը կոչված է գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ հարուստ գրականությունը ի սպաս դնելու տվյալ մասնագիտական կոլեկտիվին և գիտա-մատենագիտական ու տեղեկատու-մատենագիտական աշխատանքների կազմակերպմամբ սպասարկելու գիտնականներին ու ասպիրանտներին:

Միայն 1969 թ. ակադեմիական բոլոր գրադարանները սպասարկել են 11 հազար ընթերցողների, որոնք օգտվել են շուրջ մեկ միլիոն հրատարակությունից: Դա կենտրոնական գրադարանը, բացի գիտա-մատենագիտական ծավալուն աշխատանքներից, ակտիվ գրքափոխանակություն է, կատարում արտա-

սահմանյան 600 հասցեներով. Ակադեմիական գրադարանների աշխատանքները գլխավորում է Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահությանը կից գրադարանային հատուկ հանձնաժողովը՝ ակադեմիկոս Ա. Ղարիբյանի գլխավորությամբ

Տեխնիկական պրոգրեսի առաջադիմությունը հնարավորություն է ընձեռել կոորդինացնելու հանրապետության բոլոր տեխնիկական գրադարանների գործունեությունը, որը իրականացնում է ՀՍՍՀ Պետպլանին կից հանրապետական գիտա-տեխնիկական գրադարանը՝ ավելի քան 400 հազար միավոր գրքային ֆոնդերով: Առողջապահության բնագավառի աշխատողներին մասնագիտական գրականությամբ սպասարկելու գործը կազմակերպում է ՀՍՍՀ առողջապահության մինիստրության հանրապետական բժշկական գիտական գրադարանը, որն ունի ավելի քան 350 հազար գիրք:

Հայաստանի խոշոր գրադարաններից է Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանը, որը հիմնադրվել է 1921 թ. ուսուցչական սեմինարիայի գրադարանի բազայի վրա: Նրա ֆոնդերն այժմ հասնում է մեկ միլիոն 180 հազար տպագիր միավորի: Գրադարանը միայն 1969 թ. սպասարկել է 11,840 ընթերցողներ՝ պրոֆեսորա-դասախոսական կազմին և ուսանողությանը: Նա գրքափոխանակություն է կատարում, ոչ միայն ՍՍՀՄ, այլ արտասահմանյան 60-ից ավելի բուհական գրադարանների հետ: Բուհական գրադարանների աշխատանքները կոորդինացնելու նպատակով ստեղծվել է միջբուհական գրադարանների խորհուրդ, որը ղեկավարում է պետական համալսարանի գրադարանը:

Գրադարանային ցանցի անընախընթաց աճը, հրամայական պահանջ էր առաջադրում հանրապետությունում պատրաստել միջին և բարձրորակ մասնագետ կադրեր և այդ ուղղությամբ ևս անցած 50 տարիներին հսկայական աշխատանք է տարվել:

Կառավարության որոշմամբ 1947 թ. կազմակերպվել է Երևանի ակումբագրադարանային տեխնիկումը՝ ցերեկային և հեռակա բաժիններով (այժմ գործում է էջմիածնում): Այդ նույն թվականից համալսարանի բանասիրական ֆակուլտետում կազմակերպվել է գրադարանային բաժին, որը տվել է երկու շրջանավարտ: 1954—1964 թթ. Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում, հետագայում նաև պետհամալսարանում գործել է գրադարանային բաժին: 1970 թ. Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտն ունի գրադարանային բաժին՝ ցերեկային և հեռակա ուսուցմամբ: Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրությունը պարբերաբար կազմակերպում է գրադարանավարների վերապատրաստման մեկ և երկու ամսյա դասընթացներ՝ մասսայական գրադարանների աշխատողների համար, ինչպես և տեղերում 10-օրյա սեմինար պարապմունքներ:

ՀՍՍՀ կառավարությունը ժողովրդական տնտեսության զարգացման պլանի համաձայն տարեցտարի ավելացնում է գրադարանների ցանցը: Հանրապետության շատ շրջաններում ու քաղաքներում կառուցվել են հարմարավետ շենքեր գրադարանների համար: 1967 թ. սկսվել է Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի նոր գրապահոցի շինարարությունը՝ 10 միլիոն կտոր գրքի համար: Բազմաթիվ կոլտնտեսություններ կառուցում են գյուղական ակումբի տիպային շենքեր՝ իրենց գրադարաններով: Արդեն շահագործման են հանձնվել այդպիսի 70 շենքեր, իսկ այս տարի կհանձնվեն ևս 50-ը:

Ինչպես ՍՍՀՄ-ում, այնպես էլ մեր հանրապետությունում, գրադարանային գործի հետագա զարգացման, նրա աշխատանքների կատարելագործման և գրադարանային շինարարության էլ ավելի ծավալման համար մեծ խթան էր ՍՄԿԿ Կենտկոմի 1959 թ. սեպտեմբերի 22-ի որոշումը՝ «Երկրում գրադարանային գործի վիճակի և նրա բարելավման միջոցառումների մասին»:

Հայկական ՍՍՀ ԴԱ-ի հասարակական գիտությունների գրադարանը (դիրեկտոր, բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Բաբայան) տարեկան սպասարկում է հումանիտար գիտությունների բնագավառի 750 աշխատողներ՝ նրանց տրամադրելով 63,400 կտոր գրքեր, բրոշյուրներ և հանդեսներ: Դրադարանը պարբերաբար կազմակերպում է ցուցահանդեսներ, կազմում է գրականության թեմատիկ բարտարաններ և հանձնարարական ցանկեր, տալիս է գրավոր ու բանավոր մատենագրական տեղեկանքներ: Դրադարանի 160 հազարից անցնող (հիմնականում հասարակական գիտությունների վերաբերյալ) գրքային ֆոնդը նպաստում է այդ բնագավառի աշխատողների առջև ծառացած գիտական խնդիրների հաջող լուծմանը:

Սովետական պետության մեջ, որտեղ գիրքը օգտագործվում է լայն մասշտաբներով՝ բնակչության կոմունիստական դաստիարակության, աշխատավորության կուլտուր-բաղաքական մակարդակի անընդհատ բարձրացման համար, գրքի դերը բացառիկ մեծ է:

Հանրապետության բաղաքներում, շրջկենտրոններում, առանձին բանավաններում, գյուղերում ներկայումս գործում են 81 գրախանութներ, իսկ 120 գյուղական առևտրական խանութներում՝ բաժիններ նախահեղափոխական ժամանակաշրջանի հստ ու կենտ գրավաճառատների փոխարեն: Բավական է նիշատակել, որ միայն 1969 թ. ընթացքում Հայգիրքը բնակչությանը վաճառել է 3,5 միլիոն ռուբլու արժողությամբ գրքեր և բրոշյուրներ:

Բնակչության շուրջ 95%-ը ունի իր անձնական գրադարանը՝ 20 միլիոն գրքով: Այսօր յուրաքանչյուր սովետական ընտանիք ունի 300—5000 կտոր գրքային ֆոնդով գրադարան և տարեկան ստանում է, միջին հաշվով, 2 ամսագիր և 4 թերթ:

Սակայն գրքի և պարբերական մամուլի նկատմամբ մեր ժողովրդի պահանջների անընդհատ աճը չի կարող բավարարվել միմիայն գրքի առևտրի միջոցով: Նրա զարգացումը դեռևս չի նշանակում կրճատել գրքերի հասարակական օգտագործումը՝ գրադարանների օգնությամբ:

Դրադարանների գործունեությունը սովետական կարգերի շնորհիվ այնքան է ընդարձակվել, որ գրադարանները դարձել են մշակութային յուրահատուկ օջախներ: Նրանք կազմակերպում են ստուգատեսներ, գրքերի քննարկումներ, ընթերցողների կոնֆերանսներ ու գրականության տեսություններ:

Դրադարաններում աշխատողների ենթող մասը, իր բարեխիղճ աշխատանքով, հսկայական փորձ է կուտակել գրքային հարստություններն արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրությանը, գիտաշխատողների և սովորողների ուսուցմանը ծառայեցնելու համար: Հանրապետության գրադարանային աշխատողները, նրանց թիվը հասնում է 6.940-ի, ավելի սերտորեն են կապվում ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, ուսումնական հաստատությունների և առանձին կազմակերպությունների կոլեկտիվների հետ, նպաստում նրանց առջև դրված կոնկրետ խնդիրների իրագործմանը: Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը 1958 թ. նոյեմբերի 11-ի հրամանա-

գրով սահմանել է «Հանրապետության վաստակավոր գրադարանավարի» պատվավոր կոչում, որին արդեն արժանացել են 165 գրադարանային աշխատողներ: «Դեռագանց աշխատանքի գրադարանի» կոչում են ստացել 74 գրադարաններ: Շուրջ 350 գրադարանային աշխատողներ պարգևատրվել են պատվոգրերով: ՍՍՀՄ Դեռագույն սովետի նախագահությունը վերջերս շքանշաններով և մեդալներով պարգևատրեց մեր հանրապետության մի խումբ գրադարանային աշխատողների:

Սովետական տարիներին մեր կուսակցության և կառավարության դրսևորած հոգատարության շնորհիվ, օրավուր ավելի է ծավալվում հանրապետության հրատարակչական ու գրադարանային ցանցը, ստվարանում է նրանցում աշխատողների թվակազմը, որոնք ոչ մի ջանք չեն խնայում գրքային անսպառ հարստությունները սովետական մարդկանց սեփականությունը դարձնելու գործում:

КНИГОПЕЧАТАНИЕ И БИБЛИОТЕЧНОЕ ДЕЛО СОВЕТСКОЙ АРМЕНИИ НА ПОДЪЕМЕ

Г. Г. АГАХАНЯН

Начальник отдела библиотек Министерства культуры Армянской ССР.
Заслуженный библиотекарь Армянской ССР

Резюме

Начиная с первых лет победы Советской власти в республике, библиотечное и издательское дело шагнуло далеко вперед. Создана широкая сеть различных типов библиотек: научных, специальных, массовых и личных.

Ныне в республике действует 2860 библиотек с книжным фондом более чем в 26 миллионов 400 тысяч экземпляров, вместо 13-и библиотек с книжным фондом в 120 тысяч экземпляров, функционировавших в 1913 году.

Только в 1970 г. (по состоянию на 1 января) библиотеками пользовалось около 860 тысяч читателей, которым было выдано 16 миллионов томов книг, журналов и брошюр. Наши библиотеки ныне превратились в подлинные очаги культуры, несущие знания в массы. За один год— 1969 г. в республике вышло в свет 1100 наименований книг и 89 периодических изданий.